

Մ. Ա. ԱՐԱՄՅԱՆ

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ՊԱՐԶ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԻՆՏՈՆԱՑԻԱՅԻ ՄԻ
ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Գրական հայերենի ինտոնացիայի հարցերը մինչև հիմա շատ քիչ են քննարկվել: Սա մի կողմից՝ հեշտացնում է հետազոտողի աշխատանքն այն առումով, որ առաջին խոսքը միշտ ավելի շահավետ ու հետաքրքիր է լինում, մյուս կողմից՝ խիստ դժվարացնում է, քանի որ մշակված սկզբունքներ և համեմատության եզրեր չունի:

Ի՞նչ լեզվաբանության մեջ, սկսած Ա. Մ. Պեշկովսկուց (որը մեծ ավանդ ունի շարահյուսության և հատկապես ինտոնացիայի հարցերի հետազոտման գործում) մինչև մեր օրերը, ինտոնացիայի ուսումնասիրման ու վերլուծման վերաբերյալ մի շարք կարծիքներ կան: Զգլանալով հիշել դրանցից մի քանիսը, մեջ բերենք նաև արտասահմանյան մի քանի լեզվաբանների ձևակերպումները:

Ըստ Ա. Մ. Պեշկովսկու՝ ինտոնացիայի բաղկացուցիչներն են մեկոդիկան, ութմը և հնչյունի ուժգնությունը: Վ. Վսեվոլոդսկի-Գերնգրոսը ինտոնացիայի մեջ առնում է հնչյունի բարձրությունը, ուժգնությունը, տեմպը և տեմբրը, Ն. Ս. Տրուբեցկոյը՝ տեմբրը, շեշտը, մեկոդիկան և դադարը, Ս. Կարցևսկին՝ երկարությունը, ինտենսիվությունը, տոնը և տեմբրը, Վ. Ա. Արսյոմովը՝ մեկոդիկան, ութմը, տեմպն ու տեմբրը, Ծ. Ի. Տորսուևան՝ տոնի բարձրությունը, ուժգնությունը, տեմպը, ութմը և տեմբրը, Շ. Բալլին՝ ինտենսիվությունը, մեկոդիկան, դադարը, Կ. Փայքը՝ շեշտը, մեկոդիկան, դադարը,

1 Զնայած հայ լեզվաբանության մեջ կարծիք կա «ինտոնացիա» տերմինը փոխարինել «հնչերանգով» (Վ. Առաքելյան և ուրիշներ), մենք, այնուամենայնիվ, որոշեցինք պահպանել «ինտոնացիա» անվանումը, քանի որ, մեր կարծիքով, հնչերանգը, որպես լեզվական երևույթ, ծավալով ավելի փոքր է, քան ինտոնացիան և իր մեջ չի ներառում խոսքի երանգային բոլոր նրբությունները:

ռիթմը, Ա. Մարտինեն՝ շեշտը, տոնը, մասամբ հնչյունի երկարությունը, Ռ. Ռոբերտսը՝ շեշտը, տոնը, հպումը (стык), Քրիստալը՝ տեմպը, շեշտումը (prominence), տոնի բարձրությունը, ռիթմը, լարվածությունը, դադարը և այլն²։ Այս շարքը կարելի է ավելացնել մի քանի անգամ։

Հայ լեզվաբաններից՝ սկսած Մ. Աբեղյանից (եթե ավելի առաջ չդնանք) և ոչ մի հեղինակ նախադասության տեսակների, նրա իմաստային ու կառուցվածքային տարբերակների հարցերը քննարկելիս շեշտից այն կողմ չի անցել, «Հայոց լեզվի տեսություն»-ում Աբեղյանը «Բառի և խոսքի շեշտեր և ամանակ» բաժնում դրում է. «Ձայնի ուժի (արտաշնչության), շեշտի, ամանակի (տեղեկության) և բարձրության վրա է հիմնված խոսքի եղանակավորումը, որ տարբեր ձևով է երևան դալիս յուրաքանչյուր լեզվի մեջ, որ և հայոց լեզվի համար դեռ ուսումնասիրված չէ»³։ Ինչպես տեսնում ենք, Աբեղյանը նկատի ունի այն, ինչ մենք կոչում ենք ինտոնացիա, և նշում է նույնպես դրա բաղկացուցիչները՝ ձայնի ուժ, տեղեկություն և բարձրություն։

Գր. Ղափանցյանը իր «Ընդհանուր լեզվաբանության» մեջ, անդրադառնալով շեշտի իմաստատարներակիչ դերին, դրում է. «Ձայնի բարձրացումը մենք հիմա օգտագործում ենք նաև վերաբերմունք (զգացմունք) արտահայտելու համար, ինչպես «ա՛յո» և «այո՛», ուր առաջին դեպքում բարձրացող (ելնող) է, իսկ վերջին դեպքում՝ իջնող»⁴։

Հետագայում ևս Ա. Ղարիբյանի, Գ. Սևակի և ուրիշների քերականագիտական և ոչ մի աշխատությունում ինտոնացիայի, որպես քերականական իմաստավորող միջոցի մասին հիշատակություն չկա։

1959 թ. լույս տեսավ Վ. Առաքելյանի «Ներածություն հայերենի շարահյուսության» խորագիրը կրող գիրքը։ Նախադասության սահմանման վերաբերող բաժնում հեղինակը նշում է, որ նախադասության սահմանումը լրիվ չի լինի, երբ այն հաշվի չի առնում նախադասության ձևի և բովանդակության միասնությունը։ Ձև հասկացության տակ հեղինակը նկատի է ունեցել նախադասության մեջ սուբյեկտիվ տարրի նշումը, «որովհետև նախադասությունը, իբրև հաղորդման հիմնական ձև, առանց խոսողի վերաբերմունքի իրողու-

² См. Т. М. Николаева, Интонация сложного предложения в славянских языках, Библиография, М., 1969.

³ Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1969, էջ 97։

⁴ Գր. Ղափանցյան, Ընդհանուր լեզվաբանություն, Երևան, 1939, հ. 1, էջ 74։

թյուն չի դառնում: Սրա հետ կապված է նաև հնչերանգությունը, որն ամբողջացնում է նախադասությունը և բաժանում է շարահյուսական տարրերի, դրսևորում է նրա հուզաարտահայտչական առանձնահատկությունները և ներգործում լսողի վրա, և վերջապես հնչերանգությամբ (ինտոնացիայով) են ձևավորվում հեղինակային կամ նպատակային կազմով տխրավորվող նախադասության տեսակները⁵: Ինչպես տեսնում ենք, հարցադրումը խիստ գիտական է և հույս է ներշնչում, որ աշխատությունում այն կատանա զարգացման ավելի լայն ծավալ, սակայն այդ տեղի չի ունենում:

1962 թ. լույս տեսած Ս. Աբրահամյանի «Արդի հայերենի շարահյուսության մի քանի հարցեր» աշխատությունում նախադասությունների հիմնական հատկանիշները բնորոշելիս հեղինակը անդրադառնում է ինտոնացիայի կատարած ֆունկցիային նախադասության մեջ և տալիս է դրա բնորոշումը:

Հեղինակը գրում է. «Նախադասության հիմնական հատկանիշներից մեկն էլ բացի ստորոգումից, հատուկ ինտոնացիան է: Եթե ստորոգումը հատկանիշը վերագրում է առարկային, մի բան, որ խիստ էական է նախադասության համար, ապա նախադասության ինտոնացիայով ձևավորվում է մտքի ավարտվածությունը⁶: Ս. Աբրահամյանը ինքնուրույն ֆունկցիաներ է վերագրում շեշտին ու ինտոնացիային, դրանով իսկ առանձնացնելով ինտոնացիան որպես առանձին երևույթ. «Ինտոնացիան այնքան կարևոր նշանակություն ունի նախադասության համար, որքան բառական շեշտը՝ բառի համար», — գրում է նա: Եվ վերջապես, Ս. Աբրահամյանը տալիս է ինտոնացիայի տահմանումը. «Ինտոնացիա ասելով պետք է հասկանալ ամբողջ նախադասության արտաբերման ընթացքում արտասանական ելևէջների (այդ թվում նաև տրամաբանական շեշտի) ամբողջությունը, որն իրոք մի ներդաշնակ ամբողջություն է կազմում⁷: Թե ինչ պետք է հասկանալ «արտասանական ելևէջներ» հասկացության տակ, ցույց կտա հետագա փորձառական վերլուծությունը, որը կօգնի ավելի ճշգրիտ դարձնելու ինտոնացիայի բնորոշումը:

Ինտոնացիայի իմաստատարքերակիչ ֆունկցիայի ողջ ծանրությունը Ս. Աբրահամյանը կենտրոնացնում է հիմնականում տրամա-

5 Վ. Առաֆեյան, Ներածություն հայերենի շարահյուսության, Երևան, 1959, էջ 39—40:

6 Ս. Աբրահամյան, Արդի հայերենի շարահյուսության մի քանի հարցեր, Երևան, 1962, էջ 23:

7 Նույն տեղում, էջ 25:

բանական շեշտի վրա և դրանցից էլ բխեցնում այն միտքը, թե անդեմ նախադասությունների ձևավորման գործում գլխավոր դերը պատկանում է ինտոնացիային: Այս դեպքում ստորոգումն արտահայտվում է բերականական գրո միջոցով, ինտոնացիան փոխարինում է ստորոգմանը: Օրինակ՝ Լոն՝լ, ծայնեբին՝ վե՛րջ: Ներկայացնե՛լ փաստաթղթերը և այլն: Ինտոնացիայի մասին որպես իմաստատարբերակիչ հիմնական միջոցի (բերականական գրո միջոցի դեպքում) նշվում է նաև այլ հեղինակների մոտ:

Մեր կարծիքով, հենց սրան է հանգում Ա. Մ. Պեշկովսկու լեզվական փոխարկերի հափառարակչության (կամ փոխհատուցման, закон компенсации) օրենքը⁸: Դրա էությունը հետևյալն է: Միշտ չէ, որ լեզուն ունենում է բերականական հատուկ ձև բերականական որոշակի իմաստ արտահայտելու համար: Երբեմն էլ բերականական ձևը լեզվում կարող է առկա լինել, սակայն խոսքային հանգամանքները (речевая ситуация) այնպիսին լինեն, որ այդ ձևը չօգտագործվի: Նման դեպքերում լեզուն դիմում է բերականական այլ ձևերի կիրառմանը, որոնք փոխարինելով լեզած կամ չօգտագործվող բերականական միջոցներին, խոսքային տվյալ հանգամանքներում ապահովում են բերականական իմաստային հավասարակշռություն:

Տարբեր լեզուներում բերականական այդ միջոցները տարբեր են: Անգլերենում, օրինակ, այդ ֆունկցիան հիմնականում ընկնում է բառերի դասավորության վրա. հայերենում, ռուսերենում այս միջոցը (այսինքն՝ նախադասության մեջ ենթակայի և ուղիղ խնդրի տարբերակումը ըստ նախադասության մեջ գրաված դիրքի) միայն մասամբ է գործում: Հիշենք օրինակներ դասական հայերենից կամ արևմտահայերենից. Հայր սիրէ զմորդի և Որդի սիրէ զմայր: Мать любит дочь և Дочь любит мать կառուցվածքը խորթ չլինելով ռուսերենին, այնուամենայնիվ, խոր արմատներ չունի լեզվում: Սակայն The daughter loves the mother և The mother loves the daughter նախադասությունների կառուցվածքային առանձնահատկությունները ըստ սուբյեկտի ու պրեդիկատի՝ նախադասությունում գրաված դիրքի ու դասավորության կարգի, իմաստատարբերակիչ ու տիպական են անգլերեն լեզվի համար և բնութագրում են անգլերենը որպես անջատական համակարգի լեզու:

⁸ См. А. М. Пешковский, Русский синтаксис в научном освещении, М., 1956; Интонация и грамматика, Изб. труды, М., 1959 և այլ աշխատություններ:

Դրա փոխարեն հայերենում քերականական իմաստներ արտահայտելու գործում դրսևորվում է ինտոնացիան որպես կարևոր միջոց:

Քերենք մի օրինակ՝ Մի՞թե արդեն գնում ես: Արդեն գնում ես: Դնում ե՞ս: Մի՞թե: Արդե՞ն: Նույնի զուգահեռները ռուսերենում Неужели уже уходишь? Неужели уходишь? Уже уходишь? Уже? (միշտ պետք է նկատի ունենալ, որ խոսքային հանգամանքները քիչ թե շատ նախապես հայտնի են):

Ինչպես տեսնում ենք, բոլոր նախադասություններում էլ զարմանք կամ աստուածանք է հայտնվում գնալու առթիվ, և այդ արվում է ինտոնացիայով, ինչպես օժանդակ բառերի առկայության դեպքում, այնպես էլ առանց այդ բառերի: Փաստորեն հաղորդակցումը կատարվում է միայն ինտոնացիայով:

Բանն այն է, սակայն, որ Ա. Մ. Պեշկովսկու մոտ հատուկ չի առվում, թե արդյո՞ք փոխհատուցման այս սկզբունքը կիրառելի է բոլոր տեսակի նախադասությունների նկատմամբ: Հեղինակը ցուցադրական նյութը փաստորեն քաղում է միայն հարցական ու պայմանական նախադասություններից (սակայն օրենքի մասին խոսելիս որևէ վերապահություն չի անում): Դա, իհարկե, հասկանալի է, քանի որ ամենացայտուն կերպով ինտոնացիայի՝ քերականական միջոցի, ֆունկցիան դրսևորվում է հարցական ու պայմանական նախադասություններում:

Պատմողական նախադասություններում, երբ վերջինս զրկվում է իր քերականական արտահայտության միջոցներից, նկատելիորեն ակտիվանում է ինտոնացիայի դերը: Այս դեպքում, սակայն, պետք է նշել, մեր վարժիրքով, կարևոր մի հանգամանք: Պատմողական նախադասությունների դեպքում, խոսքային հանգամանքների ինչ-որ օղակում, անպայմանորեն բացահայտ կամ ենթադրատային ձևով առկա է որևէ պայման կամ հարցում, և ի պատասխան այդ պայմանի կամ հարցման է, որ պատմողական օղակում որպես քերականական միջոց հանդես է գալիս ինտոնացիայի գործունեությունը: Այսպես՝

— Կարծես երեկ էր, որ հայրդ զանգահարեց:

— Կարծե՞ս, — (զարմանք կասկածի համար):

— Այո: — Ինչո՞ւ (հարցում զարմանքով՝ կասկածի համար): Կամ՝

— Հազիվ թե քեզ դուր գա:

— Ինչո՞ւ:

— Հազիվ թե: Հավանաբար՝ ոչ:

Նման ևրանգավորումների վերլուծությունը կարծես չի տեղավորվում Ա. Մ. Պեշկովսկու փոխհատուցման օրենքի շրջանակներում և մեղ հանգեցնում է այն մտքին, որ ինտոնացիայի հաղորդակցող ֆունկցիան բացահայտելու գործում լինելով խիստ բեղմնավոր, այդ օրենքը, այնուամենայնիվ, պահանջում է ինչ-որ վերապահումներ՝ նախադասությունների կառուցվածքային տարբեր տիպերի նկատմամբ կիրառելու տեսակետից:

Նշենք նաև, որ նախադասության բնույթի մասին խոսելիս Ս. Աբրահամյանը այն կարծիքն է հայտնում, թե երբեմն պատմողական նախադասությունն ունենում է թեթև բացականչական երանգ, բայց մնում է պատմողական: Ինչո՞ւ. որովհետև նախադասության բնույթի ձևավորման երկու հիմնական գործոն գոյություն ունի. մեկը՝ բայի էությունից բխող եղանակային իմաստը, մյուսը՝ ինտոնացիան: Այսինքն՝ սա իրականում Ա. Մ. Պեշկովսկու քերականական միջոցների հավասարակշռության սկզբունքի շարադրանք է, որ Աբրահամյանը անում է անկախ Պեշկովսկուց: «Զպետք է կարծել, — դրում է հեղինակը, — թե պատմողական նախադասություններով զգացմունք, հոգեկան ապրումներ չեն արտահայտվում: Պետք է տարբերել երկու բան: Զգացմունք, որ արտահայտվում է նախադասությամբ և զգացմունք, որ արտահայտվում է ինտոնացիայով»⁹:

Այս տեսակետից հետաքրքրություն են ներկայացնում միակազմ նախադասությունները: Ըստ մի քանի հեղինակների¹⁰, միակազմ նախադասություններն առավել ցայտուն արտահայտված ինտոնացիոն նկարագիր ունեն, քան բարդ նախադասությունները: Այս առումով էլ շատ հեղինակներ գտնում են, որ հետազոտման համար սլարդ նախադասությունները անհամեմատ ավելի բարդ սյրոցես են ներկայացնում, քանի որ բնույթով շատ են ընդհանուր¹¹: Բարդ կառուցվածքի նախադասությունները, փրենց միջանկյալ երկրորդական նախադասություններով, կարծես, ինքնըստինքյան հուշում են նախադասության ինտոնացիայի բնույթը:

Է. Աղայանը, «Գրաբարի քերականություն» հետաքրքրական ու շատ հարցեր նորովի մեկնաբանող աշխատությունում (1964) «Շեշտ և ելևէջավորում (ինտոնացիա)» բաժնում հիմնականում խոսելով

⁹ Ս. Աբրահամյան, նշված աշխ., էջ 71:

¹⁰ 3. И. Клычникова, Бессоюзное предложение и его понимание. Уч. зап. 1. МГПИИЯ, т. VI, 1953; Интонация как средство связи частей сложного предложения. «Phonetica», 1956, т. 12, № 3—4.

¹¹ Т. М. Николаева, М. Петер, 3. И. Клычникова և ուրիշներ:

շեշտի ավանդական դերի մասին հայերենում, նշում է, հատկապես զրաբարում, շեշտի ունեցած իմաստատարերակիչ ֆունկցիան¹²։ Հիմնականում ծավալվելով շեշտի շուրջը, հեղինակը, սակայն, շատ քիչ է անդրադառնում ինտոնացիայի հարցերին։ Խոսքի մեջ վերաբերմունք, հույզ, զսնադան ադրամադրություններ արտահայտելու համար է։ Աղայանը առաջարկում է «հուզական ելևէջ» հասկացությունը, իրավացիորեն նշելով, որ ինտոնացիոն երևույթները հայերենում կարիք ունեն փորձառական ուսումնասիրության։

1969 թ. լույս տեսավ Ս. Աբրահամյանի «Ժամանակակից հայերենի քերականություն» խորագիրը կրող աշխատությունը։ «Նախադասություն» ընդարձակ բաժնում հեղինակը մանրամասնորեն վերլուծելով բնական ալգ միավորը դրա ավանդական հասկացությունը թարմացնում է գիտականորեն նորովի մոտեցմամբ։ Առաջին հերթին դա վերաբերում է մեզ հետաքրքրող հարցին՝ նախադասության հնչերանգին (հեղինակի տեղիքն է—Ս. Ա.)։ Սահմանելով նախադասությունը որպես ստորոգումով և հնչերանգային ավարտվածությամբ ձևավորված բնական հաղորդակցման հիմնական նվազագույն միավոր, Ս. Աբրահամյանը ինտոնացիայի դերը նախադասությունը կազմակերպելու գործում հավասարազոր է դնում շեշտի դերի հետ՝ բառի կազմակերպման գործում։ Ս. Աբրահամյանը հաստատորեն հայտարարում է, որ, քանի որ անդեմ նախադասությունների մեջ լիարժեք ձևով առկա է այն ամենը, ինչին ծառայում է ստորոգումը, և քանի որ հնչերանգը ստորոգում արտահայտող գործոններից մեկն է, ապա անդեմ նախադասություններն ունեն հնչերանգ։

Նախադասության տեսակներն ըստ երանգի դասդասելիս Ս. Աբրահամյանը ավանդական չորս տեսակներին (պատմողական, հարցական, բացականչական, հրամայական) ավելացնում է հինգերորդը՝ խառը երանգի նախադասություններ¹³, երբ միևնույն նախադասությունում տեղ են գտնում տարբեր տիպեր։ Օրիակ՝ Ի՞նչ ես կանգնեմ, ֆշի՛ր, ֆշի՛ր կամ Բա՛ց աբա, լսո՞ւմ ես, ֆե՛զ եմ տեսնում և այլն, ինչպես տեսնում ենք, հարցական, հրամայական և պատմողական երանգները միասին են հանգես գալիս։

12 Է. Աղայան, Գրաբարի քերականություն, մաս Ա, 1964, էջ 276։

13 Ս. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, 1969, էջ 356։

Այստեղ հարկ է նշել Աճառյանի կարծիքը ինտոնացիայի մասին: Բանն այն է, որ այդ մասին Աճառյանը գրում է իր «Լիակատար քերականության» 6-րդ հատորում, որը լույս տեսավ 1971 թ.¹⁴ Սակայն ինչ խոսք, հեղինակը այդ մտքերը շարադրել է մեր նշած շատ և շատ հեղինակներից առաջ, գուցե նաև մինչև Արեղյանը:

Աճառյանը մի տեղ գրում է. «Ամեն ձայն ունի իր որոշ բարձրությունը, ուժգնությունը և տևողությունը, որոնք արդյունք են մի կողմից խոսակցության տոնի և մյուս կողմից յուրաքանչյուր լեզվի սովորական օրենքների: Նրանց հետ կապված է նախադասության ընդհանուր ոճը: Ձայնաբանության գործն է ուսումնասիրել այս բոլոր հարցերը»¹⁵, Ըստ երևույթին հեղինակը նկատի ունի նախադասության ինտոնացիոն որոշ հանգամանքներ: Մի քիչ անց Աճառյանը ավելի որոշակիորեն, առանձին գլխով անդրադառնում է կոնկրետ ինտոնացիայի հարցերին: «Մի բառի կամ մանավանդ մի նախադասության բոլոր ձայները միևնույն երաժշտական բարձրությամբ չեն արտաբերվում. երբեմն ձայնը բարձրանում է, երբեմն իջնում. ձայնի բարձրության այս զանազանությունը կոչվում է ինտոնացիա կամ ելեէջ (intonation)»¹⁶, Հայ լեզվաբանության մեջ փաստորեն սա ինտոնացիային տրվող առաջին սահմանումն է: Ինչպես տեսնում ենք, հեղինակը հիմնական տեղ է հատկացնում ինտոնացիայի ֆիզիկական գործոններին (նման մոտեցում մենք հանդիպում ենք ժամանակակից շատ հեղինակների մոտ): Այնուհետև Աճառյանը մանրամասնում է ինտոնացիայի զանազան տարատեսակները: Դրանցից առաջինը խոսողի ներքին անհատական զգացումն է տվյալ խոսքի նկատմամբ. սա ունի զգայական (emotionnelle) անվանումը, երկրորդը խոսքի բովանդակությանը թխող ինտոնացիան է, որը հեղինակն անվանում է տրամաբանական, երրորդը, երբ ինտոնացիան խոսքի անբաժան մասն է կազմում (սա հատկապես վերաբերում է միավանկային լեզուներին. օր՝. չինարեն, աննամերեն և այլն): Այսպես՝ պարզա խոսքը ինքնըստինքյան ունի բարձրացող ինտոնացիա, հատկապես առաջին վանկը: Սա հեղինակը անվանում է լեզվական պատճառ կամ փարձրության շեշտ (ton, accent de hauteur):

¹⁴ Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 6, Երևան, 1971 թ.:

¹⁵ Նույն տեղում, էջ 252:

¹⁶ Նույն տեղում, էջ 283:

Այնուհետև Աճառյանը առանձին-առանձին քննում է ձայնի ուժգնությունը, շեշտը, ձայնի տևողությունը, ուրիշը և դադարը, ըստ երևույթին համարելով այս բոլորը ինտոնացիայի բովանդակության մեջ մտնող տարրեր:

Մեր կարծիքով, Աճառյանի՝ ինտոնացիային վերաբերող այս շարադրանքը հենց արժեքավոր է նրանով, որ հեղինակը չափազանց տրամաբանորեն ներկայացնելով ինտոնացիայի կառուցվածքը՝ ֆիզիկական տեսանկյունից (ձայնի բարձրություն, ուժգնություն, տևողություն, շեշտ, ուրիշ, դադար), դրանից անմիջապես բխեցնում է նոր լեզվական ֆունկցիան, ցույց տալով դրանց առաջացման հոգեբանական, տրամաբանական, քերականական պատճառները:

Այսպիսով, մեր կարծիքով, Աճառյանի՝ ինտոնացիային նվիրված շարադրանքը չնայած իր վաղեմությանը ունի ժամանակակից շունչ, տրամաբանական է ու գիտական: Ինչ վերաբերում է ինտոնացիային տրվող սահմանմանը, այն իհարկե, բավականաչափ ընդհանուր է և միակողմանի:

* * *

Ինչպես Լ. Վ. Շչերբան է նշում, նախադասության ինտոնացիան կազմվում է այդ նախադասության բաղադրիչների՝ միմյանց նրկատմամբ ունեցած հարաբերությունից, այսինքն՝ նախադասության շարույթային հարաբերությունից: Այդ տեսակետից պարզ նախադասության ներսում գործող շարույթային հարաբերությունների վերլուծությունը անհամեմատ ավելի բարդ է, քանի որ նախադասության շարույթային հատվածները միշտ չէ, որ կարող են համընկնել շարահյուսական միավորների հետ (ինտոնացիոն հատվածները հաճախ շեղվում են շարահյուսական հատվածներից): Բացի այդ, տարբեր անհատներ տարբեր ձևով կարող են մասնատել նախադասությունը (եթե, մասնավորապես, նախադասության շարահյուսական կառուցվածքը չի օգնում նրա շարույթային մասնատմանը)՝ դրանով իսկ փոխելով նախադասության հաղորդակցման իմաստը: Ուրեմն գոյություն ունի նաև սուբյեկտիվ մոմենտ, որը չի կարելի անտեսել նախադասության ինտոնացիան վերլուծելու ժամանակ:

Բարդ նախադասության շարույթային մասնատումը մեծ մասամբ համընկնում է նրա շարահյուսական ու իմաստային մասնատմանը՝ բանավոր խոսքում՝ վերջինիս ինտոնացիոն արտահայտչականության, իսկ գրավոր խոսքում՝ կետադրական նշանների

շնորհիվ¹⁷, Այս առթիվ ավելորդ չէ հիշել Ա. Մ. Պեշկովսկու դիտողությունը. «նորմալ արտահայտչականությամբ ընթերցելու դեպքում համարյա միշտ նախադասությունների միջև սահմանները նրզվում են այս կամ այն ռիթմիկ ու մելոդիկ հատկանիշներով»¹⁸։ Պարզաբանելու նպատակով բերենք հետևյալ օրինակը։

1. Քամին դադարեց, Քամին (և ոչ թե անձրևը) դադարեց։

2. Քամին, որ ամեն ինչ տակն ու վրա արեց, դադարեց։

Առաջին նախադասությունը շարահյուսորեն հասցված է նվազագույնի, թվում է ավարտված ու վերջնական, Սակայն խոսքային հանգամանքները հաղորդակցման տեսակետից այնպիսին են, որ պահանջում են լրացուցիչ պարզաբանում։ Այս դեպքում տրամաբանական շեշտն է իր վրա վերցնում հաղորդակցման ամբողջ իմաստը, և, երբ փոխվում է տրամաբանական շեշտը, փոխվում է նաև հաղորդակցման իմաստը։ Քամին դադարեց։ Քամի՛ն (ու թե ձյունը կամ անձրևը) դադարեց։ Երկրորդ նախադասության մեջ խոսքային հանգամանքները շատ ավելի հստակ են։ Տրամաբանական շեշտը նորից կարևոր դեր է կատարում հաղորդակցման համար, սակայն այլևս երկիմաստ չէ։ Միջադաս երկրորդական նախադասությունը, ու շաղկապի միջոցով միանգամից սլարդեցնում է և վերջնական է դարձնում հաղորդակցման իմաստը, և ամենաարտահայտիչ ինտոնացիայի դեպքում նույնիսկ հասկանալի է, որ խոսքը միայն քամու մասին է։

Տրամաբանական շեշտը, որ ինքնուրույն որակ լինելուց զատ խոսքի ինտոնացիոն կառուցվածքի որոշող գործոն է, շատ ավելի կարևոր ֆունկցիա ունի անշաղկապ նախադասությունների հաղորդակցումը կազմակերպելու գործում, քան, ասենք, բարդ կառուցվածքի նախադասությունների համար, որոնք կապերի ու շաղկապների շնորհիվ արդեն ունեն ինտոնացիոն ավելի ցայտուն ու հստակ կառուցվածք և դրանով իսկ ավելի հեշտ են վերլուծման ենթարկվում։

Պարզ նախադասության ինտոնացիան քննելիս ամենից առաջ հարկավոր է պարզաբանել, թե շարահյուսորեն միևնույն (պարզ

¹⁷ Ուզում ենք նշել, որ «կետադրական նշաններ» անվանումը, մեր կարծիքով նեղ է ու տարրական։ Փաստորեն դրանք զրավոր խոսքում կատարում են քերականական միջոցների դեր և նախադասության ինտոնացիոն իմաստների նշանակումներ են։ Մենք առաջարկում ենք, քննարկման կարգով, մտցնել «ինտոնացիոն նշաններ» անվանումը։

¹⁸ А. М. Пешковский, Роль выразительного чтения в обучении знакам препинания, Изб. труды, М., 1959, стр. 19.

միակազմ կամ երկկազմ) կառուցվածքի, սակայն ինտոնացիոն տարրեր բնույթ ունեցող նախադասութիւնները շարահյուսական բնույթից բխող ինչպիսի ընդհանրութիւններ (հետեւապես՝ նաև տարբերութիւններ) ունենւոյն ինչպիսի է բնութագրւում ինտոնացիան որպէս ֆիզիկական և որպէս քերականական երևույթ. որքանով է արդարանում Ա. Մ. Պեշկովսկու՝ քերականական միջոցների հավասարակշռության օրենքը. ինչպիսի՞ սահմանափակումներ կարող է ունենալ այն. ի՞նչ հարաբերութիւն գոյութիւն ունի ինտոնացիայի բանավոր և գրավոր դրսևորումների միջև. ինտոնացիոն ո՞ր տիպերն են առաջել գործուն արդի հայերենում և դրսևորման ինչ՞ ձևեր կարող են ունենալ: Սրանք հարցեր են, որոնց ուսումնասիրութիւնն ու պարզարանումը փորձառական ճանապարհով գիտական հետաքերքութիւն կարող է ներկայացնել հայ քերականագիտութիւն համար:

* * *

Պարզ պատմողական նախադասութիւնների դրսևորման ձևերը տարրեր են: Դրանք կարող են լինել միակազմ, անդեմ, երկկազմ՝ համառոտ և ընդարձակ և այլն: Օրինակ՝ Յրանց: Անձրեւում է: Ես հեռացա: Ես կտառեցի ջրի քաժակը և այլն: Բոլոր դեպքերում, սակայն, մենք ունենք լիարժեք ատորոգումներ թե՛ ձևով, թե՛ բովանդակութիւնով, այսինքն՝ կամ առարկայի գործողութիւն, վամ էլ՝ առարկայի հատկանիշի նկատմամբ ունեցած հարաբերութիւն: Այս հարաբերութիւն արտահայտման գործում կարևոր դեր ունի ինտոնացիան:

Ընդունելով, որ ինտոնացիայի դերը նախադասութիւն մեջ հիմնականում հանգում է հաղորդակցում կազմակերպելուն, լինի գա հուզական, հարցական կամ սովորական պատմողական երանգավորմամբ, պետք է գտնել ինտոնացիայի այն անփոփոխակը, որը կազմելով հաղորդակցման կմախքը, խոսքային հանգամանքներում աճելով՝ ընդունում է զանազան երանգավորումներ: Վերջիվերջո, որքան էլ յուրահատկութիւն ու անհատականութիւն տարբերվեն խոսքի ինտոնացիոն երանգավորումները, այնուամենայնիւ, դրանք միևնույն համաժողովրդական լեզվի դրսևորումներն են և, հետեւապես, պետք է ունենան մի փնջ-որ ընդհանուր ուրվագիծ: Մեծ տեղ հատկացնելով խոսքի շարահյուսական կառուցվածքին՝ պետք է նրկատի ունենալ նաև, որ նախադասութիւն ինտոնացիոն բնույթը նրա շարահյուսական կառուցվածքից մեխանիկորեն բխեցնելը նույնպէս արդյունավետ չի կարող համարվել:

Անհրաժեշտ է նկատի ունենալ միաժամանակ նախադասու-

թյան շարահյուսական կառուցվածքը (շարութային խմբերը), ինտոնացիայով տրվող հաղորդման լիարժեքությունը:

Նախադասության ինտոնացիայի անփոփոխակի ուրվագծումը գործնականորեն պետք է բխի դրա հաղորդակցող իմաստի բացահայտումից, որն իր հերթին նկատի ունի նախադասության շարահյուսական կառուցվածքն ու նրա վերլուծական ուսումնասիրությունը:

Պատմողական նախադասության ինտոնացիայի քննությունը արտասահմանյան հեղինակների մոտ հիմնականում ընթացել է ընդհանուր տեսական հարցերի սրարդարանման ուղղությամբ (ինտոնացիայի բնույթը, նախադասությունների շարահյուսական հիմնական տիպերի ինտոնացիոն տարբերակումը և այլն. Զոնս, Սմիթ, Բոլինջեր և ուրիշներ)¹⁹:

Ռուս լեզվաբանները հիմնականում ուշադրություն են առնում ինտոնացիոն միջոցները՝ առնչված պարզ նախադասության շարութային վերլուծման, դրանց դրսևորումների օրինաչափությունների հետ և այլն (Ա. Ի. Կալաչև, Վ. Ս. Լյուբոպիտևովա, Օ. Ա. Նորբ, Ե. Ի. Տորսուևա և ուրիշներ)²⁰:

Մեր հարցադրումը նկատի է առնում ինտոնացիայի ինչպես շարահյուսական-կառուցվածքային ուրվագիծը, այնպես էլ նրա հաղորդակցող ֆունկցիան և ինտոնացիայի բնութագրման հարցում այդ երկու գործոնների հավասարապես կարևոր դերը:

Որպես պատմողական նախադասությունների ինտոնացիայի փորձառական քննության նմուշ առաջարկում ենք հետևյալ նախադասությունները.

Միակազմ

Հոկտեմբերյան քաղաք: Ապրիլյան ջինջ առավոտ: Երկնքի լազուրում, կայարանի վրա թեատարած ճախրում են դարնան հետ իրենց բույնը վերադարձած արագիլները (ԵԶ):

Ամեն ինչ գորշ, առօրյա: Ինչպես միշտ գորշ փոշոտ փողոց. Սառը ջուր: Խաղող: Գինի: Մարդիկ: Կառքեր: Մարդիկ: (ԵԶ):

Երկկազմ (համառոտ)

Զանգը խփեց: Գնացքը մեկնելու էր: Գնացողներն աշխուժացան:

Գարուն է: Մառերը ծաղկել են: Օրը ջերմանում է:

Երկկազմ (ընդարձակ)

Գառնիում ծառերն արդեն ծաղկել են:

19 Տե՛ս Դ. Մ. Николасен, նշված աշխատ.

20 Նույն տեղում:

Ճանապարհի երկու եզրին ընկած էին ալպիական մանուշակներ (Բակ):

Երկրորդ հարկի պատշգամբում մենք մի ժեռ քահանա տեսանք:

Տրամաբանական շեշտի փոփոխության հետևանքով նախադասությունների որոշ փոփոխությունները ցույց տալու նպատակով նախադասություններից մեկում մենք կատարեցինք նախադասության անդամների որոշ վերադասավորում:

Գառնիում ծառերն արդեն ծաղկել են:

Ծառերն արդեն Գառնիում ծաղկել են:

Գառնիում արդեն ծառերը ծաղկել են:

Ծաղկել են արդեն ծառերը Գառնիում:

Հաբշուկան նախադասություններում ինտոնացիոն ու իմաստային վերլուծությունը ավելի ցայտուն է դրսևորվում: Հարցում կարող է կրել նախադասության ամեն մի անդամ (որպես գործողություն կատարող, ստորոգյալը ավելի հաճախ է ընկնում հարցման տակ): Օրինակ՝ Դու այսօր մեկնելու՞ ես: Դու այսօր՞ ես մեկնելու: Դու՞ ես այսօր մեկնելու: Սովորաբար հարցումը նախադասության մեջ մեկն է ընկնում: Սակայն հնարավոր է, որ նախադասության երկու (և ավելի) անդամներ միաժամանակ հարցում ունենան: Այսպես, օրինակ՝ Ի՞նչ ունի, արդյո՞ք, երեխան, ինչու՞ է շարունակ լռում, ճի՞վանդ չէ՞, արդյո՞ք:

Հարցական նախադասության ինտոնացիոն կառուցվածքը ընդհանուր առմամբ նախապես բաժանում ենք երկու կարգի. հարցական նախադասություն՝ հարցական դերանունների մասնակցությամբ և հարցական նախադասություն՝ առանց այդ դերանունների:

Հարցական դերանուններով կազմված նախադասությունները հետաքրքրություն են ներկայացնում նաև նրանով, որ հայերենում դրանք համընկնում են հարաբերականներով կազմված նախադասությունների հետ՝ միայն առանց հարցման: Եվ ինտոնացիոն այն փոփոխությունը, որ կատարվում է նախադասության հետ, երբ վերջինս պատմողական ոճից անցնում է հարցականի, անկասկած լեզվական փոխակերպման հետաքրքիր օրինակ է: Այս առումով էլ մենք, ընտրելով հարցական դերանուններով կազմված մի քանի նախադասություններ, միաժամանակ, փերցրել ենք նույն նախադասությունները՝ հարաբերական դերանուններով: Մեղդիկայի, տեմպի, ուժգնության և ինտոնացիոն այլ բաղկացուցիչների կրած փո-

փոխութիւնները նման համեմատութեան պայմաններում ավելի ցայտուն են դրսևորվում: Այնուամենայնիվ, մենք կարծում ենք, որ հարցական երանգավորող բառերը (միթե, արդյո՞ք, ուր, ինչպես, քանի. չի՞նք թե և այլն) խոսքի մեջ իրենց ետևից քաշում են ամբողջ նախադասութիւնը՝ ուղղակիորեն պարտադրելով նրան հարցական ինտոնացիա, և հենց այդ պատճառով էլ, մեր կարծիքով, հարցական երանգավորող բառերով կազմված նախադասութիւնների ինտոնացիայի ուսումնասիրութիւնը փորձառական տեսակետից ավելի քիչ հետաքրքրութիւն է ներկայացնում:

Այս նկատի ունենալով և, որ ուսումնասիրութեան ժամանակ մենք ավելի ծանրացել ենք այն նախադասութիւնների վրա, որոնք ներկայացնում են տրամաբանական ստորոգյալի կամ նախադասութեան մեջ այլ անդամի միջոցով կազմվող հարցում: Այսպիսով, հարցական նախադասութեան կառուցվածքային տարրերակազմը նախապես ուրվագծել ենք հետևյալ կերպ. հարցում՝ հարցական դերանունների և հարցական երանգավորող բառերի առկայութեամբ (երբ հարց կրողը դերանունը կամ եղանակիչն է), հարցում՝ միայն տրամաբանական ստորագյալին (որը նաև քերականական ստորոգյալ է), հարցում՝ նախադասութեան մեկ այլ անդամի, որը կարող է լինել ինչպես տրամաբանական ստորոգյալ (սակայն չհամընկնել քերականական ստորոգյալին), այնպես էլ ցանկացած մեկ այլ անդամ:

Այս կարգով էլ խմբավորել ենք վերլուծման ենթակա նյութը, որը ներկայացնում ենք ստորև:

Առանց մարտունակութեան ինչի՞ է պետք սպառազենքը (ԴԴ):

Ո՞ր եմ դնում ես, ո՞ր պիտի հանգչեմ:

Ո՞րը պիտի լինի

Կայանս վերջի (ԱԻ):

Ձիւնի՞ թե հիմար բան ասացի (ՆԴ):

Զե՞ս ամաչում... չե՞ս ամաչում... չե՞ս ամաչում...

Դու դժվ՞ել ես (ՆԴ):

Գառնիում ծառերը ծաղկե՞լ են:

Դեռ խոսո՞ւմ ես:

Ուրեմն ներո՞ւմ ես (ՍԶ):

Մա՞յրդ հանձնարարեց (ԴԴ):

Հազրո՞, դու լա՞վ էիր ապրում քո գյուղում (Բակ.):

Ասացինք, որ հարցական նախադասութիւնը սովորաբար պարունակում է իր մեջ մեկ հարցում, որը հիմնականում կրում է

ստորոգում արտահայտող հատվածը՝ Սակայն հայերենի համար, մեր կարծիքով, խորթ չեն այն ձևերը, երբ հարցական ինտոնացիա կրող բառը փաստորեն տրամաբանական շեշտը կրողն է, սակայն հարցման բուն էությունը այն բառի մեջ է, որը տվյալ դեպքում զուրկ է հարցումից։ Սա այն դեպքն է, երբ տրամաբանական շեշտըն ու հարցման ինտոնացիան չեն համընկնում։ Նախադասությունը փաստորեն ունենում է կրկնակի հարցում։ Այս տեսակը մենք լատինացիները ենք հարցական նախադասությունների ընդհանուր խմբից և անվանում ենք կրկնահարցական նախադասությունների թերեք մի քանի օրինակ՝

Հապա ե՞ս ի՞նչ ասեմ։

Սակայն մե՞նք ինչո՞ւ մնացինք։

Իսկ ա՞յս նախաբարը ո՞ւմ կողմն է (ԴԴ)։

Իսկ սա՞ ո՞ր արվեստն է։

Այս կարգի նախադասությունները հիմնականում տարակուսանք, երկմտություն ու կասկած արտահայտող երանգ ունեն (հենց դրանից էլ բխում է կրկնակի հարցական բնույթը)։ Փորձառական հետազոտությունը լրացուցիչ նյութ կտա մեր կարծիքին։

Հրամայական նախադասությունները շեշտակիոր ինտոնացիայով կազմված նախադասություններ են։ Դրանք կարող են արտահայտել վերաբերմունք, նպատակ, պահանջ, ուժեղ խնդրանք, հրաման և այլն։ Բոլոր դեպքերում, սակայն, նախադասության բուն էությունը խոսողի թելադրանքն է խոսակցին։ Հրամայական նախադասությունների ձևավորման գործում վճռական դերը պատկանում է ստորոգյալին։ Եթե ստորոգյալը կազմված է բայի հրամայական եղանակով, շեշտը, որ բխում է այդ նախադասությունների էությունից, գրավոր խոսքում կարող է բացակայել, սակայն դա բոլորովին էլ չի թուլացնի նախադասությունների հրամայական բնույթը։

Այս առիթով տեղին է հիշել Վ. Վ. Վինոգրադովի մի դիտողությունը. «Հրամայական եղանակի համակարգում այդ ինտոնացիան (հրամայական—Ա. Ա.) պետք է գիտել որպես բայաձևի օրգանական պատկանելիություն։ Այս ինտոնացիայից դուրս հրամայական եղանակ գոյություն չունի»²¹։

²¹ В. В. Виноградов, Русский язык, М., 1947, стр. 161.

Օրինակ՝

Հանի՛ր քո սերը սրտիցդ անհույս,
Այդ խորթ, ապօրեն զավակն աշխարհի,
Զդի՛ր այս դաժան, մութ գիշերին դուրս
Ցուրտ քամու րերան, թո՛ղ երթա սառի... (ԱԻ):

Նույնը պետք է ասել նաև հրամայական եղանակի արգելակա-
նով կազմված նախադասությունների մասին. նախադասության
կառուցվածքը (ոչ կամ մի ժխտականի առկայությունը) մեծ մասամբ
թելադրում է հրամայական ինտոնացիա: Օրինակ՝

Վայ չկտրե՛ս, Աստված սիրես, էս մինն ահա տար քեզ ծառա:
Միայն թե էդպես մի՛ ցնջիլ մեզ բնով տեղով: ամբողջ ցեղով
(ՀԹ):

Համեմատության կարգով դիտելով անդեմ նախադասություն-
ները, տեսնում ենք, որ վերջիններիս դեպքում վիճակը այլ է. շեշ-
տի դերը խիստ նշանակալից է: Օրինակ՝ Ո՛չ մի ձայն նախադա-
սությունը կարելի է հասկանալ և՛ որպես հրաման, երբ շեշտված է,
և՛ որպես հարցումի պատասխան, եթե շեշտված չէ (հմտ.
—Արա՛մ, —Ոչ մի ձայն): Կամ ասենք՝ Բաբձրացնել աշխատանքի
առտադրողականությունը, որ կարելի է ընկալել և՛ որպես հրաման,
և՛ որպես պատմողական տեքստի մի հատված:

Ենթանկալ հրամայական եղանակի մասին,—գրում է Ա. Մ.
Պեշկովսկին,— մենք պետք է նշենք, որ այն հատուկ երանգավո-
րում է ստանում բացառապես նրանում գործող ինտոնացիոն մի-
ջոցների շնորհիվ: Այսինքն՝ կարելի է ասել, որ «գնա», «գնացե՛ք» և
այլ ձևերը առանց ինտոնացիայի միևնույն ձևով կարող են արտա-
հայտել և՛ հրաման, և՛ խնդրանք, և՛ խորհուրդ և այլն, և այլն:
Նույն ձևով էլ կարող են շարտահայտել այդ բոլորը, այլ միայն սո-
վորական գործողություն կատարելու թելադրանք»²²:

Ուրեմն ստորոգումը, փաստորեն ձևավորվելով բայի հրամա-
յական եղանակով, դուրս է գալիս ֆունկցիոնալ իր նեղ ոլորտից,
ավելի լայն կիրառություն է ստանում և դրսևորվում է հրամայա-
կան ինտոնացիայով: Ինտոնացիայով տարբերակված իմաստներն
այս դեպքում հարաբերում են այն իմաստներին, որոնք արտա-

22 А. М. Пешковский, Русский синтаксис в научном освещении, М., 1957, стр. 176

հայտնում են խոսողի՝ գործողության կամ ասվածի նկատմամբ ունեցած հարաբերությանը:

Քանի որ, ինչպես ասվել է, ինտոնացիան քերականական այլ միջոցների հետ հավասար կազմակերպում է նախադասության հաղորդակցումը, ուրեմն ինտոնացիայի և շարահյուսական մնացած միջոցների միջև պետք է գործի ինչ-որ հարաբերություն: Այս առումով հետաքրքրություն է ներկայացնում Ա. Մ. Պեշկովսկու մի դիտողությունը, որը հիմնված է ինտոնացիայի՝ քերականական միջոցների հետ ունեցած բազմաթիվ խաչաձևումների օրինակների վրա: «Ինտոնացիան,—գրում է նա,—իրենից ներկայացնում է քերականությանը զուգահեռ ինչ-որ բան և ոչ թե նրա բաղկացուցիչ մասը: Քերականությունը, բառագիտությունն ու խոսքի իրադրությունը (հեղինակն օգտագործում է «обстановка речи» հասկացությունը—Ա. Ա.) համազոր լեզվական միջոցներ են»²³:

Այսպիսով հենց իր՝ Պեշկովսկու մոտ մենք հստակություն չենք տեսնում ինտոնացիայի բնութագրման հարցում, քանի որ մի կողմից նա ինտոնացիան համարում է քերականական միջոցներին փոխարինող լեզվական տարր (հիշենք նրա քերականական միջոցների հավասարակշռության օրենքը), մյուս կողմից՝ ինտոնացիան համարելով ինքնուրույնաբար գոյություն ունեցող (սակայն քերականությանը համազոր) ինչ-որ բան, չի ասում, թե վերջիվերջո դա ինչպիսի երևույթ է:

Ինչպես չի կարելի պատկերացնել մտածողությունն առանց խոսքի, այնպես էլ չի կարելի հասկանալ խոսք՝ առանց ինտոնացիայի: Եվ քանի որ խոսքը լեզվի գոյն է, նրա դրսևորման ձևը, ուրեմն ինտոնացիան լինելով լեզվական երևույթ, անմիջականորեն կապվում է խոսքի հետ, դառնում խոսքի գոյաձևը, վերջինիս իրացման միջոցը: Առանց ինտոնացիայի չի կարող խոսք դրսևորվել: այս առումով մենք ինտոնացիան համարում ենք խոսքային հանգամանքների մեխը, որի շուրջը կամ որի մեջ ծավալվում է խոսքը: Այսպիսով, չլինելով անմիջականորեն քերականական երևույթ, սակայն իր ֆունկցիայով կատարելով քերականական միջոցի դեր, ինտոնացիան կապվում է խոսքի (և ոչ լեզվի) հետ, դառնալով այն ֆոնը, որի վրա կառարվում է տվյալ խոսքի հաղորդակցումը:

²³ А. М. Пешковский, Роль выразительного чтения в обучении знакам препинания. Изб. труды. М., стр. 20.

Այսպիսով, ստացվում է մի աստիճանական համակարգ, որն սկսվում է լեզվից, դրսևորվում է խոսքի միջոցով, ծավալվում է ինտոնացիայի ոլորտում և նոր միայն ստանում է հաղորդակցման տեսիլ:

Եթե խոսքի իմաստը չի համապատասխանում նրա ինտոնացիային, մենք ավելի շատ հավատում ենք ինտոնացիային,— ասում են Փայթն ու Սպեյրսենը: Եվ իրականում դա այդպես է: Շատ հաճախ մենք ինտոնացիայով արտահայտում ենք այն իսկական միտքը, որ թաքնված է քերականորեն ձևավորված խոսքի ետևում. այսինքն՝ ոչ թե ուղղակի ակթստը, այլ ենթատեքստը:

Հայտնի են այնպիսի դեպքեր, երբ անձանթ լեզվով ասված մաքերը դառնում են հասկանալի միայն ինտոնացիայի շնորհիվ (մանավանդ, երբ խոսքային հանդամանքները քիչ թե շատ հայտնի են խոսակից կողմերին):

Այսպիսով, խոսքի մեջ ինտոնացիան, որպես հաղորդակցումը իրականացնող միջոց, հաղորդում է նախ՝ այն միտքը, որը նախօրոք հանձնարարված է տեքստով (այս դեպքում մենք ունենք խոսքի շարահյուսական կառուցվածքի և նրա արտահայտած իմաստի ներդաշնակությունը), ապա այն միտքը, որը շեղվում է խոսքի շարահյուսական իմաստից և հաղորդում է ենթատեքստը՝ ուժեղացնելով կամ թուլացնելով խոսքի շարահյուսական իմաստը:

Սա ինտոնացիայի մյուս ֆունկցիան է, որ մենք անվանում ենք զգացական: Ինտոնացիան, որպես ամբողջություն, այս երկուսի (շարահյուսական-կառուցվածքային և զգացական) միասնությունն է, քանի որ եթե արտահայտվածը խոսք է, ապա այն պետք է հավասարապես ունենա և՛ իմաստ, և՛ վերաբերող զգացական կողմ: Խոսքի համար այս երկու կողմերից որևէ մեկին գերազնահատուկություն տալը դժվար է:

Այսպես ուրեմն, կարծեք թե ինքնըստինքյան անհրաժեշտություն է դառնում խոսքի զգացական, էքսպրեսիվ կողմը ինչ-որ մի դիսցիպլինի մեջ ամփոփելու հարցը:

Մեր կարծիքով, նպատակահարմար կլիներ խոսքի էքսպրեսիվ կողմը, այսինքն՝ ինտոնացիոն երանգափոխությունները, հատկացնել ոճաբանության բնագավառին, քանի որ, լինելով խոսքի հիմնական կազմակերպիչը, ինտոնացիան, ոճական մյուս գործոնների հետ միասին, այնուամենայնիվ, վերլիզվական երևույթ է՝ պայմանավորված խոսքի հանգամանքային բովանդակությամբ,

տվյալ խոսքային իրադրության նկատմամբ խոսողի զանազան վերաբերմունքներով:

Անդրադառնալով հրամայական նախադասություններին՝ նըշենք, որ հարկադրական եղանակիչով ձևավորվող որոշ նախադասությունների ինտոնացիոն երանգավորումը նկատելիորեն ավելի հրամայական է:

Գործողության կատարման անհրաժեշտությունը ինքնըստինքյան թելադրում է այդ ինտոնացիան, իսկ վերջինիս ավելի շեշտումը օժանդակում է նախադասության հարկադրական բնույթի ուժեղացմանը: Օրինակ՝

Ես մինչ ի մահ, կախաղան,
Մինչև անարգ մահու սյուն,
Պիտի գոռամ, պիտ կրկնեմ
Անդադար ազատություն (Նալբ).

Պարզաբանելով հնարավոր առարկությունը, ասենք, որ պիտի եղանակիչը պոտենցիալ ձևով իր մեջ արդեն պարունակում է հրամայական հարկադրական ինտոնացիա: Պիտի եղանակիչը հրամայական ինտոնացիան ավելի է տեղադրում:

Եվս մի երկու օրինակ՝ Պետք է բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը: Պիտի կանգնեցնել կադրերի ճոսքը: Այս նախադասություններում պիտի, պետք է եղանակիչները ավելի ուժեղացնում են փնքնըստինքյան գիտակցվող հրամայական ինտոնացիան, և նախադասությունը, փաստորեն, կրկնակի ինտոնացիոն երանգավորում է ստանում, և այդ կրկնակի երանգավորումները տշ թե միմյանց ծածկում են, այլ միմյանց կողքի կամ զուգահեռ գործելով՝ ուժեղացնում են խոսքի ինտոնացիոն երանգը:

Միևնույն կառուցվածքի նախադասությունները ինտոնացիոն փոփոխությունների հետևանքով իմաստային նոր երանգավորում են ստանում: Օրինակ, ենթադրական եղանակի հետևյալ նախադասությունները՝ Կգնաս, ներս կմտնես ու կասես. ուրախ կարելի է համբերել այս վիճակը (հորդորական խնդրանքով), Կգնաս, ներս կմտնես ու կասես. ուրախ կարելի է համբերել ա՛յս վիճակը (սպառնալի, հրամայական):

Ինչպես տեսնում ենք, հրամայական ինտոնացիայի դրսևորումները բավական բազմազան են, Ընդհանուր եզրակացության գալու համար անհրաժեշտ է վեր հանել հրամայական ինտոնացիան բնորոշող տարբերակիչ հատկանիշները, տարբերակելով ու

առանձնացնելով դրանց մեջ ավելցուկային, ոչ բնորոշ հատկանիշները, նշել այն հիմնական դորժներ, որն ապահովում է հրամայական ինտոնացիայի հաղորդակցող ֆունկցիան, վեր հանել նախադասության շարահյուսական բնույթից բխող ինտոնացիոն յուրահատկությունները՝ ելնելով դրանց համապատասխանություններից ու անհամապատասխանություններից, տալ հայերենի պարզ նախադասությանը բնորոշ հրամայական ինտոնացիայի կաղապարային ուրվագիծը և գտնել համեմատության եզրեր՝ ինտոնացիոն մյուս ուրվագծերի հետ:

Ելնելով այս նպատակադրումներից՝ որպես հետազոտության նյութ ընտրել ենք այնպիսի նախադասություններ, որոնք խաչաձևվող ավելի քիչ կետեր ունեն ինտոնացիոն այլ երանգ ունեցող նախադասությունների հետ և արտահայտում են բուն հրամայականը իր մի քանի տարբերակներով՝ հրաման, կարգադրություն, պահանջ, կոչ, հորդոր, խորհուրդ և այլն:

Ստորև բերում ենք հրամայական նախադասությունների նըմուշներ:

Գնա՛, քարավանս, ինձ հետդ քա՛րշ տուր
Օտար, ամայի ճամփեքի վրա (ԱԻ):

Եվ թո՛ղ ինձ մենակ, զնա, հեռացի՛ր,
Ես չեմ հավատում քո լաց ու կոծին (ԱԻ):

Թո՛ղ,— տիրական ձայնով դռնից կինը,— թո՛ղ,
ասում եմ (ՔՔ):

Աղջի՛, վարդի՛թեր, մեր Թագուհու համար մի աման թա-
նով լցրու,— կարգադրեց պապը (ՔՔ):

Հազար շեփոր հնչե՛ն թող այս առավոտ,
Հազար թմբուկ խփե՛ն թող այս առավոտ.... (ԳՍ):

Ազատության Զանգ, դու վե՛հ դողանջե
Կովկասյան վսեմ, վես բարձունքներից,
Ինչպես մրրիկ՝ շաչե՛, շառաչե՛,
Մինչև սիգապանծ ազատն Մասիս (ԱԻ):

Հե՛յ ձեզ մատաղ, բանվոր տղերք,
Մե՛կ էլ, մե՛կ էլ, մի զարկ տվեք (ՀՀ):

Մի հավատա ստվերներին, Հենվիր միայն քեզ վրա,
Ատելու չափ սիրի՛ր մարդկանց, բայց լավություն
միշտ արա (ԱԻ):

Համեցե՛ք, խնամիներ, համեցե՛ք, նե՛րս համեցեք (Շիրվ)։

Ռացականչական նախադասություններն արդի հայերենում ունեն իրենց մի քանի երանգավորող բառերը, ինչպես՝ հե՛յ, ջա՛ն, երա՛նի, ա՛խ, օ՛հ, վա՛ն, ա՛ն և այլն։ Սրանցով կազմված նախադասությունները, այսպես կոչված, բուն բացականչություններն են, որոնց առանձնահատկությունն այն է, որ և՛ գրավոր, և՛ բանավոր խոսքում, անկախ ինտոնացիայի սուբյեկտիվ արտահայտչականության աստիճանից և գրության ձևից, միշտ պահպանում են բացականչական երանգը։

Հայերենին հատուկ են նաև առանց այս երանգավորող բառերի ձևավորվող բացականչական նախադասություններ։ Դրանց յուրահատկությունն այն է, որ եթե խոսքը գրավոր է, ապա բացականչական ինտոնացիոն նշանները պարտադիր են, իսկ բանավոր խոսքի ժամանակ խոսողը պետք է պահպանի բացականչական ինտոնացիայի արտահայտչականությունը (հակառակ պայմաններում և՛ բանավոր, և՛ գրավոր խոսքում այդ նախադասությունները կընկալվեն որպես պատմողական նախադասություններ)։

Ուրեմն՝ բացականչական երանգը մի դեպքում բխում է նախադասության քերականական կառուցվածքից (երանգավորող բառեր)։ Սրանք բուն բացականչականներն են, որոնք պատմողականի չեն վերածվի՝ անկախ այն բանից, թե ունեն ինտոնացիոն նշաններ կամ արտահայտչականություն, թե՛ ոչ։ Դրանք կարող են արտահայտել հիացմունք, զարմանք, մեծ ցանկություն և այլն։ Օրինակ՝

Հե՛յ ազա՛հ մարդ, հե՛յ անգո՛հ մարդ, միտքդ երկար,
կյանքդ կարճ,
Քանի՛ քանիսն անցան քեզ պես, քեզնից առաջ, քո
առաջ (ՀԹ)։

Մյուս դեպքում նախադասության բացականչական բնույթը բխում է խոսքի հանգամանքներից և ֆունկցիոնալ կախման մեջ է վերջինիցս։ Միայն ինտոնացիոն արտահայտչականությունը և միջոցները (գրության ձևը) կարող են ապահովել այդ խոսքի բացականչական ինտոնացիոն երանգավորումը (հակառակ պայմաններում այն կընկալվի որպես պատմողական խոսք)։ Օրինակ՝

Իմ սուր, արթուն ականջում Մի խոր ձեն է միշտ հնչում,
Անհուն, անքուն կարոտով, Իրեն մոտ է ինձ կանչում (ՀԹ)։

Սրանց մենք անվանում ենք ֆունկցիոնալ բացականչական-ներս Այս կարգի նախադասությունների ուսումնասիրությունը շատ հետաքրքրական է, քանի որ խոսքի հանդամանքներից բխող բացականչական ինտոնացիոն երանդը, փաստորեն, վերջինիս տալիս է մի նոր իմաստավորում, որը նախնական, ելակետային (պատմողական) խոսքի համեմատությամբ մի նոր աստիճան է:

Տեղին է հիշել, որ, այսպես կոչված, անխառն, սոսկ մեկ բնույթի ինտոնացիայով ձևավորվող խոսք դժվար է դնել Ավելի պարզելով մեր միտքը՝ ասենք, որ եթե նախադասությունը պատմողական, հարցական կամ հրամայական բնույթի է, ապա շատ հաճախ մեկի գերակշռությամբ (որի անվանումով էլ բնութագրվում է նախադասությունը) տվյալ խոսքում գործում են նաև այլ երանգային տարրեր: Այսպիսի դեպքում նախադասության ինտոնացիոն բնութագրման համար հիմնական դերը ընկնում է հատկապես շեշտի վրա:

Ու. Աբրահամյանը այս տիպի նախադասություններն անվանում է խառը երանգի նախադասություններ: Օրինակ՝

Դուրսը, չգիտեմ, Անձրև՝ է դալիս
Թե գլխիս վերև խեղճ մայրս է լալիս (ԱԻ):

Մենք դրանք շենք առանձնացնում ինքնուրույն դասի մեջ այն պատճառով, որ խոսքի մեջ հանդես եկող ինտոնացիոն նման խառնաձևերը որևէ նոր երանգային տեսակ չեն ավելացնում, այլ միայն եղած չորս հիմնական տեսակները՝ խոսքի հանդամանքներից ելնելով, ներկայացնում են զանազան ձևավորումներով: Դա բխում է լեզվի ճկունությունից և ընդհանրապես խոսքի շարժունակությունից:

Հայերենում ավելի հաճախակի են բացականչական և հարցական նախադասությունների խառնաձևերը: Այսպես՝

Հե՛յ ճամփանե՛ր, ճամփանե՛ր,
Անդարձ ու հին ճամփաներ,
Ուլքե՛ր անցան ձեզանով,
Ո՞ւր դնացին, ճամփաներ (ՀԹ):

Վերլուծման համար բնորոշ ենք հետևյալ նախադասությունները, առանձնացնելով դրանց մեջ բուն բացականչականները, այսպես կոչված, ֆունկցիոնալ բացականչականներին:

Բուն բացականչականներ

Ջա՛ն, հայրենի ծղրիղներ, ով է արդյոք լսում ձեզ (ՀԹ):
Հե՛յ ադահ մարդ, հե՛յ անգոհ մարդ, միտքդ երկար,
կյանքդ կարճ,
Քանի՛ քանիսն անցան քեզ պես, քեզնից առաջ, քո առաջ,
Ի՞նչ են տարել նրանք կյանքից, թե ի՛նչ տանես դու
քեզ հետ (ՀԹ):
Ա՛խ, ինչ ուրա՛խ եմ, փա՛ռք քեզ, աստված իմ (ԱԻ):

Ֆունկցիոնալ բացականչականներ

Ա՛նց կացան... Օրերս թռան, ա՛նց կացան,
Ախ՛ ու վախով, դարդերով, Սիրտս կերա՛ն, անց
կացան (ՀԹ):
Ետ եկե՛ք, Գարնան վարար գետ եկեք,
Անցա՛ծ օրեր, խինդ ու սեր, Դարձե՛ք, իրար հետ եկե՛ք (ՀԹ):
Մոռանա՛լ, մոռանա՛լ ամեն ինչ, Ամենին մոռանա՛լ (ՎՏ):
Ողջո՛ւյն քեզ, անհայտ անծանոթ ընկեր, Խաղաղություն քեզ,
հեռավոր եղբայր,
Ողջո՛ւյն ձեզ, վաղվա շփված կյանքեր (ԵԶ):

Այսպիսով, որպես նախնական հղրակացություն կարող ենք ասել հետևյալը. ինտոնացիան նախադասության ձևավորման արտաբերվելու միջոց լինելով, որոշիչ դեր է կատարում խոսքի իմաստային ու զգացական առանձնատկությունների հաղորդման գործում: Դրա հետ միասին խոսքի շարադրության իմաստային կառուցվածքի վերլուծումը մեծ չափով պայմանավորված է նախադասության ինտոնացիոն կառուցվածքի առանձնատկություններով, խոսքի շարադրության, իմաստային ձևավորման գործում առաջնային դեր ունի նաև ինտոնացիան, որի փոխատուցող, նախադասությունը ամբողջական դարձնող դերի մասին խոսվեց վերևում:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԻ — Ավետիք Իսահակյան
ԳՍ — Գեղամ Սարյան
Բակ. — Բակունց
ԴԴ — Դերենիկ Դեմիրճյան
ԵԶ — Եղիշե Զարենց
ՀՀ — Հակոբ Հակոբյան
ՀԹ — Հովհաննես Թումանյան

Նալբ. — Միքայել Նալբանդյան
ՆԴ — Նար-Դոս
ՆԻՐՎ. — Շիրվանդադե
ՎԴ — Վահագն Դավթյան
ՎՏ — Վահան Տերյան
ՍԽ — Սերո Խանդադյան
ՔՔ — Քրիստափոր Քափալցյան